

**«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 02.10. 2017թ.արտահերթ նիստի**

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 29 (քսանինն) անդամից 27-ը (քսանյոթը):

1. **Մինասյան Սահակ Գարուշի** — Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
2. **Ֆարմանյան Անահիտ Ժորայի** — Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
3. **Պողոսյան Բազրատ Ժորայի** — Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
4. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
6. **Մերոբյան Երվանդ Մերյոժի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
7. **Տոնոյան Երվանդ Պարույրի** — Ռազմական ամբիոնի պետի տեղակալ-ուսումնական մասի պետ
8. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** — Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն- գրադարանի տնօրեն
9. **Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
10. **Ռաֆֆի Քալաջյան Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
11. **Սարգսյան Սամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
12. **Հայրապետյան Սերգո Արտուշի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
13. **Հովհաննիսյան Անահիտ Մերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
14. **Դրմեյան Հենրիկ Ռուբենի** — Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
15. **Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր

16. **Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
17. **Ղուկասյան Լուսիկ Հենրիկի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
18. **Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
19. **Մարտիրոսյան Լևոն Մովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ
20. **Արամյան Կարեն Արմենի** — ՇՊՀ ՈԻԽ նախագահ, ռազմական ամբիոն «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 4-րդ կուրսի ուսանող
21. **Խաչատրյան Լիլիթ Վարդանի** — Մանկավարժության ֆակուլտետ, «Մանկավարժություն և մեթոդիկա», 4-րդ կուրսի ուսանողուհի
22. **Ավետիսյան Հրանուշ Կարապետի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրսի ուսանողուհի
23. **Մխիթարյան Անահիտ Աշոտի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Կիրառական արվեստ» 3-րդ կուրսի ուսանողուհի
24. **Կոստանյան Նինա Կարապետի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Մաթեմատիկա» 4-րդ կուրսի ուսանողուհի
25. **Հարությունյան Քաջիկ Հակոբի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 1-ին կուրսի ուսանող (մագիստրատուրա)
26. **Մելքոնյան Արմեն Գրիգորի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող (մագիստրատուրա)
27. **Չարչոլյան Արթուր Էդվարդի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող

ՕՐԱԿԱՐԳ

1. **Հեռակա ուսուցման և թերխմբավորված կուրսերի ուսուցման գործընթացի կազմակերպման մասին**

Հաղ.՝ ռեկտոր Ս. Մինասյան

2. **Վարձավճարների հավաքագրման աշխատանքների և 2017-2018 ուստարվա զեղչերի իրականացման մասին**

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն - պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

3. **Պրոֆեսորադասախոսական անձնակազմի վճարման համակարգի փոփոխության մասին**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր **Բ. Պողոսյան**

4.Ավարտական ամփոփիչ ստուգումների վերանայման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն - պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

5.Մասնակի փոփոխված ուսումնական պլանների հաստատման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր **Բ. Պողոսյան**

Ընթացիկ հարցեր

6.1 «Հայաստանի բուհերի կառավարման թափանցիկություն և

հաշվետվողականություն» առցանց պորտալում մուտքագրվող համապատասխան տեղեկատվության պատասխանատուների նշանակման և գործունեության մասին

Հաղ.՝ ռեկտոր **Ս. Մինասյան**

1.ԼՍԵՑԻՆ՝

Հեռակա ուսուցման և թերխմբավորված կուրսերի ուսուցման գործընթացի

կազմակերպման մասին

Հաղ.՝ ռեկտոր **Ս. Մինասյան**

Ռեկտոր Ս. Մինասյանը ներկայացրեց, որ 2017-2018 ուստարվա նախաշեմին հեռակա ուսուցման համակարգի և թերբեռնված խմբերի ուսումնական գործընթացի կազմակերպման ուղղությամբ մեր կողմից հանդես բերվեցին նոր մոտեցումներ՝ փորձարկելու առկա և հեռակա ուսուցման համակարգերի համադրման գործընթացը, 10-ը և 10-ից պակաս ուսանողների թվաքանակի դեպքում կուրսը համարելու թերբեռնված՝ դասախոսի ծանրաբեռնվածությունը համարելով լսարանային ժամերի 50%-ը:

Որոշումը ներկայացվեց գիտական խորհրդին, հաստատվեց և առերևույթ բուհը ֆինանսական առումով շահեկան վիճակում էր, բայց քանի որ նախատեսվել էր խորհրդատվական ժամեր, այն հասնում էր 62-67 տոկոսի: Այնուհանդերձ, ուսանողների մտահոգությանը տեղիք տալով՝ գտնում ենք, որ այն որպես փորձ կարելի է անցկացնել աստիճանաբար:

Ուստի գիտխորհրդին առաջարկվում է վերանայել ընդունած որոշումը և նոր որոշում ընդունել ուսումնական պլաններում շտկումներ կատարելու և հեռակա ուսուցման համակարգի 2-րդ-5-րդ կուրսերում ուսուցումն առկա համակարգից

առանձնացված իրականացնելու վերաբերյալ: 4-ից ավելի համակազմ ունեցող ուսանողական խմբերը համարել լիարժեք, 4-ից պակասը՝ թերխմբավորված: Հեռակա ուսուցման համակարգի առաջին կուրսի հարցը համարել առկախ մինչև ընդունելության քննությունների արդյունքում համակազմի ձևավորվելը: Վերջինիս պարագայում կընդունվի լրացուցիչ որոշում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Հեռակա բաժնի ուսանող Ա. Չարչոլյանը, ում հետաքրքրում էր 1-2 խմբերով ուսանողների դասապրոցեսի կազմակերպման գործընթացը: Նա կողմնակից էր առկա և հեռակա համադրմանը:

Ս. Սարգսյանի նկատումով՝ փոքր խմբերում ուսուցումը կատարվելու է տարբերակված, ամբիոնը ներկայացնելու է ուսուցման մեթոդաբանական լիարժեք ծրագիր, կատարվելու է անհատական աշխատանք:

Ռեկտոր Ս. Մինասյանը առաջարկեց, որ եռօրյա ժամկետում ամբիոնները ներկայացնեն առաջարկություններ փոքր խմբերի ուսուցման գործընթացի կազմակերպման ուղությամբ՝ առանձին մոտեցում հանդես բերելով, պահպանելով ուսանողի քսանչորսժամյա ծանրաբեռնվածությունը, մասնակից դարձնելով նաև ուսանողներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Առկա և հեռակա ուսուցումը կազմակերպել առանձնացված, 4-ից ավելի համակազմ ունեցող ուսանողական խմբերը համարել լիարժեք, 4-ից պակասը՝ թերխմբավորված՝ պայմանով, որ այն կկազմակերպի ըստ ամբիոնի առաջարկի (եռօրյա ժամկետում):

2. 1-4 ուսանող ունեցող խմբերի ուսուցման գործընթացը կազմակերպելու համար ամբիոններից ներկայացված առաջարկությունները քննարկել ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ՝

Վարձավճարների հավաքագրման աշխատանքների և 2017-2018 ուստարվա զեղչերի իրականացման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն - պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

Պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը ներկայացրեց, որ գեղչային համակարգի իրականացումը համալսարանում շարունակվում է, և 2017-2018 ուսարում արդեն երկու անգամ ուսանողների նկատմամբ կիրառվել են գեղչեր: Ֆարմանյանը նշեց, որ առաջին կուրսի առաջին կիսամյակում գեղչեր նախատեսված չեն: Սակայն Ապրիլյան պատերազմի մասնակիցներին վարձավճարի 50 տոկոսի չափով գեղչ է նախատեսվել հատուկ հրահանգավորմամբ: Բուհը վերոնշյալ անձանց վարձավճարների գեղչն իրականացրել է 100 տոկոսով:

Ֆարմանյանը նշեց, որ գեղչերի գործընթացն իրականացող հանձնաժողովն աշխատում է, և գեղչերի մասին հրապարակումները կլինեն մինչև հոկտեմբերի 15-ը:

Ֆարմանյանն առաջարկեց՝ բացի արդեն իսկ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցող ուսանողից, ուսանողական համակազմից 4-5 ուսանողի նույնպես ներգրավել մասնակցելու հանձնաժողովի աշխատանքներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ս. Սարգսյանն առաջարկեց ուսանողների ուսման վարձավճարի գեղչերից օգտվելու համար ներկայացվող փաստաթղթերի հավաքագրման և գեղչման ժամկետները ամրագրել կոնկրետ ժամանակացույցով:

Ռեկտոր Ս. Մինասյանն առաջարկեց առանձնակի գեղչեր կիրառել այն ուսանողների նկատմամբ, որոնց բաժիններում ուսուցման անվճար տեղեր հատկացված չեն:

Արտոնել գիտական խորհրդի կազմում ընդգրկված ուսանողներին (ըստ ցանկության) մասնակցելու և քննարկելու ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում հատկացնելուն առնչվող հարցերին: Հանձնարարել նորարարական և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ Աննա Մամվելի Հայրապետյանին՝ բոլոր տեղեկատվությունները պարբերաբար իրազեկելու տեղեկատվական էկրանին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Առանձնակի գեղչեր կիրառել այն ուսանողների նկատմամբ, որոնց բաժիններում ուսուցման անվճար տեղեր հատկացված չեն:

Բացի արդեն իսկ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցող ուսանողից՝ ուսանողական համակազմից 4-5 ուսանողի ներգրավել ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում իրականացնող հանձնաժողովի աշխատանքներին:

Արտոնել գիտական խորհրդի կազմում ընդգրկված ուսանողներին (ըստ ցանկության) մասնակցելու և քննարկելու ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում հատկացնելուն առնչվող հարցերին:

Հանձնարարել նորարարական և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ Աննա Մամվելի Հայրապետյանին՝ բոլոր տեղեկատվությունները պարբերաբար իրազեկելու տեղեկատվական էկրանին:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՄԵՑԻՆ՝

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի վճարման համակարգի փոփոխության մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր **Բ. Պողոսյան**

Պրոռեկտոր Պողոսյանը ներկայացրեց, որ պրոֆեսորադասախոսական անձնակազմին վճարելու ժամավճարային կարգը բուհական համակարգում ընդունելի չէ, այդ իսկ պատճառով անցնում ենք դրույքաչափով վարձատրության: Ապա ներկայացվեց պրոֆեսորադասախոսական համակազմի դասավանդման ծավալի սանդղակը՝ ղեկավարվելով ՀՀ Կառավարության 31 հունվարի 2008 N 196-Ն որոշմամբ:

N	Աստիճան, կոչում	Դրույքաչափ	Աշխատավարձ	Ժամավճար
1	ԳԱԱ թղթակից անդամ	700	230,0	1ժ-3500
2	Գիտ. դոկտոր, պրոֆեսոր	700-750	210,0	1ժ-3000
3	Գիտ. թեկնածու, դոցենտ կամ դոկտորի գիտ. աստիճան՝ առանց պրոֆեսորի կոչման կամ պրոֆեսորի կոչում՝ առանց դոկտորի գիտ. աստիճանի	750-850	180,0	1ժ-2500
4	Գիտ. թեկնածու՝ առանց դոցենտի գիտ. կոչման կամ հակառակը	800-900	170,0	1ժ-2200
5	Դասախոս	900-1080	150,0	1ժ-1700

Ռեկտոր Ս.Մինասյանն առաջարկեց ամբիոնի վարիչներին թույլատրել՝ ունենալու 1,25 դրույք, վարչական համակազմի աշխատակիցներին՝ առնվազն 1, 5 դրույք ծանրաբեռնվածություն, իսկ պրոֆեսորադասախոսական համակազմի համատեղության դեպքում՝ 1,5 դրույք:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատանքային դասավանդման ծավալը՝ ըստ վերոնշյալ աղյուսակի:

Ամբիոնի վարիչներին թույլատրել՝ ունենալու 1,25 դրույք, վարչական համակազմի աշխատակիցներին՝ առնվազն 1,5 դրույք ծանրաբեռնվածություն, իսկ պրոֆեսորադասախոսական համակազմի համատեղության դեպքում՝ 1,5 դրույք:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

Ավարտական ամփոփիչ ստուգումների վերանայման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն - պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

Պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը ներկայացրեց, որ 2017-2018 ուստարում գիտխորհրդի որոշմամբ նախատեսված էր ավարտական քննություններից անցում կատարել ավարտական աշխատանքներին: Սակայն ժամանակի առումով ավարտական աշխատանքների մեթոդաբանության չմշակվածության պատճառով Ա. Ֆարմանյանն առաջարկեց վերանայել ուսումնական տարեսկզբին ընդունած որոշումը՝ հավելելով, որ գերազանց սովորող ուսանողներն ամբիոնի համաձայնությամբ կարող են պետական որակավորման քննության փոխարեն ներկայացնել ավարտական աշխատանք:

Նշվեց նաև, որ որոշ մասնագիտությունների առնչությամբ պետք է նախապատվությունը տալ ավարտական աշխատանքների իրականացմանը: Պետական որակավորման քննությունների հարցաթերթերի ձևաչափը մշակելու համար Ա. Ֆարմանյանի կողմից ամբիոններին տրվեց հանձնարարական՝ դրանք քննարկելու և ներկայացնելու ուսումնամեթոդական գործընթացի կենտրոն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ի լրումն հին կարգի՝ համատեղել պետական որակավորման քննություններն ու ավարտական ամփոփիչ ստուգումները՝ հիմնականում պահպանելով 2016-2017 ուստարում կիրառած կարգը:

Գերազանց սովորող ուսանողներն ամբիոնի համաձայնությամբ կարող են պետական որակավորման քննության փոխարեն ներկայացնել ավարտական աշխատանք:

Ոչ մանկավարժական որոշ մասնագիտությունների առնչությամբ պետք է նախապատվությունը տալ ավարտական աշխատանքների իրականացմանը: Հանձնարարել ամբիոնների դասախոսական համակազմին հարցաթերթերի ձևաչափ մշակել, քննարկել և դրանք ներկայացնել ուսումնամեթոդական գործընթացի կենտրոն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ՝

Մասնակի փոփոխված ուսումնական պլանների հաստատման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր **Բ. Պողոսյան**

Պրոռեկտոր Պողոսյանն առաջարկեց հաստատել նախորդ գիտական խորհրդում հաստատված ուսումնական պլանների լրամշակված տարբերակը և դրանով պայմանավորված դասաքաշխումը՝ բացառելով արդեն իսկ վերհանված թերությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել նախորդ գիտական խորհրդում հաստատված ուսումնական պլանների լրամշակված տարբերակը և դրանով պայմանավորված դասաքաշխումը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

6.1 «Հայաստանի բուհերի կառավարման թափանցիկություն և հաշվետվողականություն» առցանց պորտալում մուտքագրվող համապատասխան տեղեկատվության պատասխանատուների նշանակման և գործունեության մասին Հաղ.՝ ռեկտոր Ս. Մինասյան

Ռեկտոր Ս. Մինասյանն տեղեկացրեց հրամանի բովանդակությանը, ապա ներկայացրեց, որ «Հայաստանի բուհերի կառավարման թափանցիկություն և հաշվետվողականություն» առցանց պորտալում բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության խթանման գործիքակազմի 6 հիմնական բաժինների պատասխանատուներ են նշանակվել ներքոհիշյալ անձինք.

	Գործիքակազմի բաժին	Պատասխանատու անձ	Զբաղեցրած պաշտոն
1.	Կառավարման մարմիններ	Ս. Մինասյան	Ռեկտոր
2.	Ռազմավարական պլանավորում	Ա. Ֆարմանյան	Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
3.	Ֆինանսական կառավարում	Ռ. Քալաջյան	Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և

			հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ
4.	Մարդկային ռեսուրսների կառավարում	Վ. Խաչատրյան	Անձնակազմի կառավարման և ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ
5.	Ընդունելություն, ուսանողների գնահատում, ակադեմիական կարգապահություն և ուսանողի հետ հետադարձ կապ	Բ. Պողոսյան	Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր
6.	Տեղեկատվության կառավարում	Ա. Մարտիկյան	Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի գլխավոր մասնագետ

1. Պատասխանատուները պարտավորվում են մինչև ս/թ հոկտեմբերի 9-ը ուսումնասիրել համապատասխան բաժինների հարցերը, հավաքագրել տեղեկատվություն հարցերի վերաբերյալ և ներկայացնել անհասկանալի ու պարզաբանման ենթակա կողմերը սեմինարի մասնակիցներ որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն Ա.Սարգսյանին և նորարարական և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ Ա. Հայրապետյանին:

2. Պատասխանատուները պարտավորվում են մինչև ս/թ հոկտեմբերի 22-ը ապահովել համապատասխան տեղեկատվության մուտքագրումը «Հայաստանի բուհերի կառավարման թափանցիկություն և հաշվետվողականություն» առցանց պորտալի էջ՝ ըստ իրենց տրամադրված գաղտնաբառերի, ինչպես նաև նույն այդ տեղեկատվությունը ներկայացնել տպագիր տարբերակով՝ պատասխանատուի ստորագրությամբ: